



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2021 թվականի թիվ 167-Ս

ք. Երևան

«ԲԱԳԵՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի հոկտեմբերի 05-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 53 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ԲԱԳԵՏ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու համար, ցանցային օպերատորը Հանձնաժողովի տեղում դիտարկում իրականացնող աշխատողներին չի ապահովել Օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված պայմանները:

Հանձնաժողովը ղեկավարվելով Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի և 42-րդ հոդվածի դրույթներով՝ ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում պետք է իրականացնե՝ տեղում դիտարկման միջոցով, սակայն Հանձնաժողովի աշխատողները ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում չեն կարողացել իրականացնել, քանի որ տեղում դիտարկում իրականացնող աշխատողների համար ցանցային օպերատորը չի ապահովել Օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված անհրաժեշտ աշխատանքային տարածքով և տեխնիկական միջոցներով: Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից 2021 թվականի հոկտեմբերի 05-ին կազմվել է մշտադիտարկում չիրականացնելու պատճառների մասին զեկուցագիր:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով և հիմք ընդունելով 2021 թվականի հոկտեմբերի 05-ին Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և

վերահսկողության վարչության կողմից կազմված զեկուցագիրը՝ ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Չեկուցագրում մասնավորապես նշված է, որ Հանձնաժողովի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 01-ի թիվ 42-Ա հրամանի համաձայն՝ Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից 2021 թվականի հոկտեմբերի 04-ին պետք է իրականացվեր ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկման միջոցով, սակայն Հանձնաժողովի աշխատողները չեն կարողացել իրականացնել մշտադիտարկում, քանի որ գործուղվելով ցանցային օպերատորի հասցեով, տեղում, ցանցային օպերատորի տնօրենի հետ հեռախոսազրույցից պարզվել է, որ վերջինս և ցանցային օպերատորի ներկայացուցիչը բացակայում են Աբովյան քաղաքից, հետևաբար, տեղում դիտարկում իրականացնող աշխատողներին չեն կարող ապահովել Օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված անհրաժեշտ աշխատանքային տարածքով և տեխնիկական միջոցներով:

Հանձնաժողովը 2021 թվականի հոկտեմբերի 05-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Ցանցային օպերատորի տնօրենն իր կողմից Հանձնաժողով ներկայացված գրավոր բացատրությամբ հայտնել է, որ 2021 թվականի հոկտեմբերի 04-ին, ժամը՝ 13:10-ի սահմաններում Հանձնաժողովի աշխատակիցը մշտադիտարկում իրականացնելու նպատակով կապ է հաստատել իր հետ, սակայն տնօրենն այդ ժամանակ գտնվել է Երևան քաղաքում, իսկ ցանցային օպերատորի աշխատակիցները եղել են ընդմիջման և տեղում ոչ ոք չի եղել, որպեսզի ապահովի դիտարկման համար պայմանները: Ցանցային օպերատորն իր բացատրության մեջ նշել է նաև, որ Հանձնաժողովի աշխատակցին հայտնել է, որ ժամը՝ 14:00-ին ցանցային օպերատորի աշխատակիցները վերադառնալու են աշխատանքային վայր և կապահովեն անհրաժեշտ պայմանները՝ տեղում դիտարկման համար:

Վարչական վարույթի շրջանակներում ցանցային օպերատորի տնօրենի կողմից ներկայացված բացատրության վերաբերյալ իր դիրքորոշումն է հայտնել նաև Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչությունը, որտեղ ևս մեկ անգամ հաստատել է դեռևս 2021 թվականի հոկտեմբերի 05-ի զեկուցագրում նշվածը՝ մանրամասնելով, որ Հանձնաժողովի նախագահի հոկտեմբերի 01-ի թիվ 42-Ա հրամանի համաձայն՝ Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության աշխատողները 2021 թվականի հոկտեմբերի 04-ին գործուղվելով ցանցային օպերատորի հասցեով, չեն կարողացել իրականացնել ցանցային օպերատորի գործունեության տեղում դիտարկում, քանի որ ժամանման պահին ցանցային օպերատորի տնօրենի հետ արված հեռախոսազանգից պարզվել է, որ տնօրենը և ներկայացուցիչը բացակայում են Աբովյան քաղաքից և տվյալ պահին չեն կարող ապահովել տեղում դիտարկման համար Օրենքով սահմանված անհրաժեշտ պայմանները: Ըստ ներկայացված դիրքորոշման, տնօրենը նշել է նաև, որ Աբովյան քաղաք վերադառնալու համար իրեն անհրաժեշտ է 2-3 ժամ, իսկ քանի որ ցանցային օպերատորի աշխատակիցները կարող են մոտենալ մեկ ժամից, ուստի

նպատակահարմար չէ տարածք մուտք գործել և տեղում դիտարկում իրականացնել առանց իր ներկայության: Դիրքորոշմամբ նշվել է նաև, որ տնօրենը հստակ չի պատասխանել, թե արդյո՞ք սպասելուց հետո հնարավոր կլինի տեղում դիտարկում իրականացնել:

Անդրադառնալով, ցանցային օպերատորի տնօրենի կողմից վարչական վարույթի շրջանակներում ներկայացված բացատրություններին, Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչությունն իր դիրքորոշմամբ հաստատում է այն փաստը, որ ցանցային օպերատորի կողմից ներկայացված բացատրությունները, թե ինչու չեն կարողացել ապահովել տեղում դիտարկման համար անհրաժեշտ պայմանները, համընկնում են Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության աշխատողների կողմից ներկայացված բացատրությունների հետ, իսկ 2021 թվականի հոկտեմբերի 05-ի զեկուցագիրը կազմվել է Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության աշխատողների բացատրությունների հիման վրա:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 7-րդ մասերը սահմանում են .

«1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

3. Տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում օպերատորի գործունեության տեղում դիտարկումն իրականացվում է կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանի հիման վրա:

7. Օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում վերջինս տեղում դիտարկում իրականացնող անձանց պետք է ապահովի անհրաժեշտ աշխատանքային տարածքով և տեխնիկական միջոցներով:»

Փաստում ենք նաև, որ լիցենզիա ստացած ցանցային օպերատորը վերահաղորդում է տեսալսողական ծրագրեր և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

Ցանցային օպերատորը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի

ուրորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում ցանցային օպերատորը պարտավոր էր պահպանել Օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթի պահանջը:

Մակայն, վարչական վարույթի ընթացքում ցանցային օպերատորի կողմից վարչական վարույթի փաստական հանգամանքների վերաբերյալ ներկայացվել են բացատրություններ, համաձայն որի՝ Հանձնաժողովի կողմից կազմակերպված տեղում դիտարկման օրը՝ 2021 թվականի հոկտեմբերի 04-ին, տնօրենը և ներկայացուցիչը բացակայել են Աբովյան քաղաքից, որտեղ և ցանցային օպերատորը գործունեություն է իրականացնում և հետևաբար, անկախ իրենց կամքից չեն կարողացել Հանձնաժողովի աշխատողների համար տեղում դիտարկում իրականացնելու համար ապահովել անհրաժեշտ աշխատանքային տարածքով և տեխնիկական միջոցներով:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացված փաստերը, որոնք համադրվել են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցների հետ և համադրության արդյունքում Օրենքի խախտում չի հայտնաբերվել:

Հանձնաժողովը հաշվի առնելով այն փաստը, որ վարչական վարույթի մասնակցի ներկայացված բացատրությունները համընկնում են Հանձնաժողովի աշխատողների տրված բացատրությունների հետ, իսկ վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում հայտնի է դարձել, որ ցանցային օպերատորի ղեկավարը և ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձը ցանցային օպերատորի գործունեության վայրում չեն եղել և բացակայել են Աբովյան քաղաքից, իսկ ցանցային օպերատորի աշխատակիցները կարող էին մոտենալ միայն մեկ ժամից և առանց լիազորված անձանց ներկայության տեղում դիտարկում իրականացնելը նպատակահարմար չի եղել, ուստի վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքներն ամրագրում է, որ Հանձնաժողովի տեղում դիտարկում իրականացնող աշխատողներին անհրաժեշտ աշխատանքային տարածքով և տեխնիկական միջոցներով չապահովելը եղել է ոչ ցանցային օպերատորի մեղքով:

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 53 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

- 1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) վարչական տույժ նշանակելու մասին.
- 2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 7-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. Կարճել «ԲԱԳԵՏ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 53 վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԲԱԳԵՏ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

27 հոկտեմբերի 2021թ.
ք. Երևան